ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ԵՔ-ԲՄԾՁԲ-18/36» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Իգիթյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ք. Ավետիսյան, Գ. Մկրտչյան, Ա. Կիրակոսյան, Ե. Կարապետյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Մուրադյան

1. Բաց մրցոիյթի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը գնահատելու մասին

(Տ. Իգիթյան)

1. Փաստաթղթերի գնահատման՝

- վայրը՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 321 սենյակ.
-օրը՝ 17.01.2018թ.
-ժամը՝ 15:00

Ընդունել ի գիտություն, որ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցների տվյալների ճշտման մասին հարցում է կատարվել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, որի տրամադրված եզրակացության համաձայն՝ «Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտարարությունները համարվել է իրականությանը համապատասխանող:

2. Ընդունել ի գիտություն, որ որակավորման պահանջներին իրեն համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթեր է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/Հ	Մասնակցի անվանումը
1	«Ասատրյանս» ՍՊԸ

3. Մասնակցի կողմից որակավորման պահանջներին իրեն համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում գնահատող հանձնաժողովը արձանագրեց անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ, այն է՝ «Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նախկինում կատարված պայմանագրով մատուցված նմանատիպ ծառայությունների ծավալը՝ գումարային

արտահայտությամբ, պակաս է տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում վերջինիս ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից (գնային առաջարկ՝ 1392000 ՀՀ դրամ, նախկինում պայմանագրով մատուցված նմանատիպ ծառայությունների ծավալը՝ գումարային արտահայտությամբ կազմում է 690000 ՀՀ դրամ):

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

4. Վերոգրյալով պայմանավորված՝ գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 61-րդ կետի 1-ին ենթակետը, 47-րդ կետը և Հրավերի ՄԱՍ Ի-ի 2.5 կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունը, որոշեց կասեցնել նիստը և հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցել «Ասատրյանս» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 3-րդ կետով նշված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Տ. Իգիթյան
Անդամներ՝		Ք. Ավետիսյան
		Գ. Մկրտչյան
		Ա. Կիրակոսյան
		Ե. Կարապետյան
Քարտուղար՝		Գ. Մուրադյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ԵՔ-ԲՄԾՁԲ-18/36» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Իգիթյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ք. Ավետիսյան, Գ. Մկրտչյան, Ա. Կիրակոսյան, Ե. Կարապետյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Մուրադյան

1. Բաց մրցոիյթի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը շտկելու և գնահատելու մասին

(Տ. Իգիթյան)

1. **Փաստաթղթերի գնահատման՝**

- վայրը՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 321 սենյակ.

-օրը՝ 18.01.2018թ.

-ժամը՝ 15:00

2. Ընդունել ի գիտություն, որ «Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկվել և ներկայացվել է որակավորման պահանջներին իրեն համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունը հրավերի պահանջների նկատմամբ:
   Մասնակցի կողմից որակավորման պահանջներին իրեն համապատասխանությունը հիմնավորող՝ լրացուցիչ ներկայացված (շտկված) փաստաթղթերում անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ չեն հայտնաբերվել:

   Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

3. Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 67-րդ կետի դրույթներով, որոշեց՝ ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը, այն է՝ հարցում կատարել ՀՀ ֆինանսների

նախարարություն, «Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիայի տրամադրման կամ կասեցման վերաբերյալ տեղեկատվություն ձեռք բերելու նպատակով:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Տ. Իգիթյան
Անդամներ՝		Ք. Ավետիսյան
		Գ. Մկրտչյան
		Ա. Կիրակոսյան
		Ե. Կարապետյան
Քարտուղար՝		Գ. Մուրադյան